# ՏԵՂԵԿԱՆՔ

**Իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկման վերաբերյալ**

**Իրավական ակտի նախագծի անվանում**

«ԱՆՁԻ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 13-Ի N 780-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

**Իրավական ակտի նախագիծ մշակող մարմնի անվանում**

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարութուն

**Իրավական ակտի տեսակ**

Որոշում

**Ոլորտ**

Սոցիալական ապահովություն

**Հանրային քննարկման ժամկետ**

31/01/2022 - 15/02/2022

**Ստացված առաջարկների արդյունքներ**

Ստացվել է 7 առաջարկ (կայքում առկա առաջարկներից)

Ամփոփվել է 7 առաջարկ

**Քվեարկության արդյունքներ**

1 կողմ

0 դեմ

**Տեղեկանքը գեներացվել է www.e-draft.am կայքի կողմից**

**17/02/2022**

# ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

# «ԱՆՁԻ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 13-Ի N 780-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| հ/հ | Առարկության, առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը | Առարկության, առաջարկության բովանդակությունը | Եզրակացություն | Կատարված փոփոխությունը |
|---|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 | 4 |
| 1 | Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիա<br>15.02.2022 14:49:16 | * Առաջարկ/ները հիմնված են Նախագծի՝ e-draft.am կայքում տեղադրված word տարբերակի վրա: 6. 31-րդ և 32-րդ կետերի կարգավորումները թերի են, բացակայում է նկարագրական մասը: | Հաշվի առնելով, որ առաջարկներում տրված հղումները նախագծի կետերի հետ ունեն անհամապատասխանություն, դրանք լրացուցիչ քննարկվել են առաջարկ ներկայացնողների հետ և աշխատանքային կարգով համաձայնեցվել: | |
| 2 | Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիա | * Առաջարկ/ները հիմնված են Նախագծի՝ e-draft.am կայքում տեղադրված word տարբերակի վրա: 5. 21-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ" «0.04 միավորից կամ 4%-ից, ապա անձը չի | Հաշվի առնելով, որ առաջարկներում տրված հղումները նախագծի կետերի հետ ունեն անհամապատասխանություն, դրանք լրացուցիչ քննարկվել են | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | 15.02.2022 14:49:16 | ճանաչվում հաշմանդամություն ունեցող, քանի որ, ըստ գնահատման, նա չունի ֆունկցիոնալության էական սահմանափակում կամ խնդիր իր առօրյա կյանքում:» | առաջարկ ներկայացնողների հետ և աշխատանքային կարգով համաձայնեցվել: | |
| 3 | Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիա<br>15.02.2022 14:49:16 | * Առաջարկ/ները հիմնված են Նախագծի՝ e-draft.am կայքում տեղադրված word տարբերակի վրա: 4. 19-րդ կետի 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ" «19. Անձի ֆունկցիոնալության գնահատման արձանագրությունները նաև բաժանվում դասակարգվում են ըստ հետևյալ տարիքային խմբերի՝("""»: Նույն կետում, որտեղ նշված են՝ «18 տարեկանից բարձր տարիքի անձինք», առաջարկում ենք դասակարգել նաև չափահասներին: | Հաշվի առնելով, որ առաջարկներում տրված հղումները նախագծի կետերի հետ ունեն անհամապատասխանություն, դրանք լրացուցիչ քննարկվել են առաջարկ ներկայացնողների հետ և աշխատանքային կարգով համաձայնեցվել: | |
| 4 | Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիա<br>15.02.2022 14:49:16 | * Առաջարկ/ները հիմնված են Նախագծի՝ e-draft.am կայքում տեղադրված word տարբերակի վրա: 3. Նախագծի 18-րդ կետով նախատեսված է" «18. Անձի ֆունկցիոնալության գնահատման արդյունքներն ամփոփվում են ֆունկցիոնալության գնահատման արձանագրություններում, ըստ հետևյալ տեսակների՝ • հենաշարժական խնդիրներ • տեսողական խնդիրներ • լսողական, խոսքի, ձայնի խնդիրներ • | Հաշվի առնելով, որ առաջարկներում տրված հղումները նախագծի կետերի հետ ունեն անհամապատասխանություն, դրանք լրացուցիչ քննարկվել են առաջարկ ներկայացնողների հետ և աշխատանքային կարգով համաձայնեցվել: | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | հոգեկան (մտավոր) խնդիրներ • քրոնիկական հիվանդություններ:» Առաջարկում ենք հանել այս կարգավորումը հետևյալ հիմնավորմամբ" Ֆունկցիոնալությունը և հաշմանդամությունը դասակարգելիս ՖՄԴ-ն չի սահմանում բացահայտ կամ անուղղակի տարբերակում առողջական վիճակների միջև՝ լինի դա հոգեկան, թե ֆիզիկական: Այսինքն՝ հաշմանդամությունն էթիոլոգիայով չի տարբերակվում: Առողջական վիճակից դեպի ֆունկցիոնալություն փոփոխությամբ՝ այն բոլոր առողջական վիճակները դնում է հավասար հիմքերի վրա՝ թույլ տալով դրանք համեմատել ընդհանուր չափման միջոցով: Ավելին, դա լավ միջոց է նկատելու, որ միայն ախտորոշումից (կատեգորիայից) մենք չենք կարող ենթադրություն անել անձի մասնակցության վերաբերյալ: Իսկ եթե առաջարկն ընդունելի չէ, ապա «ամփոփվում են» բառերը փոխել «դասակարգվում են» բառերով: | | |
| 5 | Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիա 15.02.2022 14:49:16 | * Առաջարկ/ները հիմնված են Նախագծի՝ e-draft.am կայքում տեղադրված word տարբերակի վրա: 2. Առաջարկում ենք ուղղել 15-րդ կետում նշված «ծածկագրը» բառում առկա վրիպակը և այն դարձնել «ծածկագիր»: | Հաշվի առնելով, որ առաջարկներում տրված հղումները նախագծի կետերի հետ ունեն անհամապատասխանություն, դրանք լրացուցիչ քննարկվել են առաջարկ ներկայացնողների հետ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | և աշխատանքային կարգով համաձայնեցվել: | |
| 6 | Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիա<br>15.02.2022 14:49:16 | * Առաջարկ/ները հիմնված են Նախագծի՝ e-draft.am կայքում տեղադրված word տարբերակի վրա: 1. Առաջարկում ենք 8-րդ կետի 12-րդ ենթակետի «կոմբինացիա» բառը փոխարինել «միացություն» բառով: | Հաշվի առնելով, որ առաջարկներում տրված հղումները նախագծի կետերի հետ ունեն անհամապատասխանություն, դրանք լրացուցիչ քննարկվել են առաջարկ ներկայացնողների հետ և աշխատանքային կարգով համաձայնեցվել: | |
| 7 | Հանուն երեխայի ներդաշնակ զարգացման նախաձեռնություն<br>13.02.2022 18:38:39 | «Միավորելով ջանքերը հանուն երեխային հոգեխոսքային և ֆիզիկական ներդաշնակ զարգացման» բազմամասնագիտական նախաձեռնող խումբը ողջունելի է համարում անձի ֆունկցիոնալության գնահատման համակարգի ներդրումը ՀՀ-ում և պատրաստակամություն է հայտնում նպաստելու այդ գործընթացներին: Ստորև ներկայացնում ենք մեր առաջարկությունները և դիտարկումները սույն նախագծի վերաբերյալ" I. Որոշման նախագծի Հավելվածի՝ 1. - 8-րդ կետում առաջարկում ենք «բժիշկները» բառից հետո ավելացնել « , այդ թվում հարբժշկական մասնագետների ներգրավվածությամբ» բառերով, «մասնագետները» բառից հետո ավելացնել « , այդ թվում բժշկների | Ներկայացված առաջարկություններից 1-ինը չի ընդունվել, քանի որ ֆունկցիոնալության գնահատումը կատարվում է բազմամասնագիտական թիմով, ինքնին հասկանալի է, որ գնահատումը կատարվում է համատեղ, սակայն յուրաքանչյուր ծածկագրի համար պատասխանատու է նեղ մասնագետը: 2-րդ կետը ևս չի ընդունվել: | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | ներգրավվածությամբ» բառերով, իսկ «աշխատողները» բառից հետո ավելացնել «այդ թվում հարբժշկական մասնագետները՝ գնահատվող անձի գտնվելու վայրում գնահատումը իրականացնելու դեպքում»: 2. Առաջարկում ենք 8-րդ և 19-22-րդ կետերը տեղափոխել «ԱՆՁԻ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 2-Ի N 276-Ն, 2015 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 12-Ի N 1318-Ն, 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1527-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ | | |